

ՄԽԻԹԱՐԵԱՆ ԲՄԻԱՐԱՆՈՒԹԻՒՆ
MECHITARISTEN-CONGREGATION
WIEN VII/62, MECHITARISTENGASSE 4

ՔԱՌԱՊԱՏԻԿ ՅՈՒԲԵԼԵԱՆՆԵՐ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Վիեննայի Մխիթարեան Միաբանութիւնն երբ 1911ին կը տօնախմբէր եռապատիկ Յոբելեաններ, չէր կարող մտաբերել թէ 50 տարի յետոյ, հակառակ երկու աշխարհաստան պատերազմներու արհաւիրքներուն, պատեհութիւնը պիտի ունենար ուրախութեամբ աւետելու այս ընթացիկ տարւոյն՝ 1961ին, բառապատիկ Յոբելեաններ: —

1. Ուխտիս Ընդհ. Աբբաճոր՝ Ամենապատիւ Գերապայծառ Հ. Մեսրոպ Արեպս. Հապոզեանի Քահանայութեան Յիսմամեակը (12 Փետրուար 1911):
2. Նորին Ամենապատուութեան Աբբայութեան 30ամեակը (9 Յուլիս 1931):
3. Մխիթարեան Միաբանութեան Թրիեսքէն փոխադրուելով Վիեննա հաստատուելուն 150ամեակը (1811 – 1961):
4. «Հանգիս Ամսօրեայ» Ուսումնաբերքին 75ամեակը (1887 – 1961):

Միաբանութեան Ընդհ. Աբբաճոր Քահանայական Ս. Օժման նուիրական օրը (12 Փետրուար 1961) պիտի տօնախմբուի պարզ, ներքին կրօնական հոգեւոր մը: Ամենապատիւ Յոբելեարը, ի յիշատակ այդ նուիրական օրուան, պիտի մատուցանէ Դոճաբանական Հայրապետական Պատարագ եւ պիտի ընդունի այդ առթիւ Վիեննայի Հայ Գաղութի շնորհաւորութիւնները:

Հանդիսական յատուկ Յոբելիանական տօնախմբութիւնները պիտի կատարուին մասնակցութեամբ եկեղեցական եւ պետական բարձր անձնաւորութիւններու՝ Սեպտեմբերի սկիզբը, մասնաւորապէս Սեպտ. 2ին եւ 3ին Շաբաթ եւ Կիրակի օրերը:

Մխիթարեան Միաբանութիւնը լիալոյս է թէ այդ հանդիսական օրերուն, արտասահմանի մեր հայրենակիցներէն բարեկամներ ու համակիրներ առհասարակ, հաճոյքը պիտի ընծայեն իրենց ներկայութեամբ պատուելու Մեծ Յոբելեանը ու Մխիթարեան Միաբանութիւնը:

Վիեննա, Յունուար 1961

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ
ՅՈՒԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱՌՈՒՄԲ

ԵՒՆՈՒԹ. —

ա) Այն հայրենակիցները, որոնք առանձին կամ ընտանիքով պիտի փափաքին մասնակցիլ Յոբելիանական հանդիսութիւններուն, հանդիս ծանուցանել այս փափաքը Յոբելիանական Յանձնախումբին, ամենէն ուշ մինչեւ Յուլիսի վերջը, արդէսգի կարելի ըլլայ իրենց՝ բնակարանային դիւրութիւններ ընծայել:

բ) Միաբանութեան Յոբելեան Պէտին փափաքն է որ այն սրտաբուխ նուիրատուութիւններ՝ որոնք պիտի կատարուին այս առիթով, յատկապէս Մայրավանքիս կից շէնքին վրայ հայ ռեստորաններու յատուկ Յարկաբաժին մը բարձրացնելու:

